ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱԲՐԱՀԱՄ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
(1878—1958)

Ապրիլի 7-ին, երկուշաբթի օր, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, 80 տարեկան ալևորյալ հասակում, իր հայրենի Բջնի գյուղում ի Տեր հանգյավ արժանապատիվ Տ. Աբրահամ քահանա Տեր-Աբրահամյանը։

Հանգուցյալը ծնվել է 1878 թվականին Ախուռյի շրջանի Բջնի գյուղում, քահանայի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է գյուղի դպրոցում, իսկ եկեղեցական ուսումը՝ Սևանա վանքում։ 1919 թվականին ձեռնադրվում է քահանա Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանից՝ Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, իր գյուղի՝ Բջնիի եկեղեցու վրա, իր հանգուցյալ հոր տեղը։

Հանգուցյալը համեստ, հավատավոր և նվիրված քահանաներից էր, ուներ քաղցր ձայն և Հայ Եկեղեցու շարականների խոր հմտություն։ Հաճույք էր լսել նրա եկեղեցական երգեցողությունը։

Նա երկար տարիներ քահանայագործել է նաև Արզաքանդում և Ալափարսում և ամեն տեղ սիրվել ու հարգվել իր ժողովրդի կողմից։ Իր երկարատև և անբասիր ու բարվոք քահանայագործության համար պարգևատրվել է քահանայական լանջախաչով երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ Կաթողիկոսից, 1954 թվականին։

Հանգուցյալը վերջերս իր առաջացյալ տարիքի պատճառով հանգստյան էր կոչվել, ստանալով կենսաթոշակ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ։

Ապրիլի 10-ին, Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, արժանապատիվ Տ. Թադեոս, Տ. Գրիգոր և տեղի ծխատեր Տ. Արսեն քահանաների և բարեշնորհ Կարապետ սարկավագի մասնակցությամբ, Բջնիում կատարեց հանգուցյալի վերջին օծումը և իր դամբանական քարոզում վեր հանեց հանգուցյալի բարի վաստակը և մաքուր անունը։

Հանգուցյալը թաղվեց Բջնիի պատմական վանքի բակում, իր հոր գերեզմանի կողքին։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։